ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերջերս ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ հայ պատմագրության աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկի՝ պրոֆեսոր Լեոյի «Հայոց պատմության» երրորդ հատորը։ Այս աշխատությունն ընդգրկում է հայ ժողովրդի 16—18-րդ դարերի սոցիալ-տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի պատմությունը։ Այս հատորը գրելիս Լեոն օգտագործել է ընդարձակ գրականություն, ձեռագրեր, արխիվային նյութեր, մեծ մասամբ սկզբնաղբյուրներ, մի հանգամանք, որը գիրքը դարձնում է խիստ արժեքավոր աշխատություն։

Գրքի վերջում կա հատուկ անունների ընդարձակ ցանկ։ Գիրքը տպագրված ու կազմված է խնամքով։ Հատորը խմբագրել են ընկ. ընկ. Մ. Ներսիսյանը և Բ. Հարությունյանը։ Նույն հրատարակությամբ լույս են տեսել ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանի «Տիեզերքի կառուցվածքը», պրոֆեսոր-դոկտոր Ե. Տեր-Մինասյանի «Ոսկեդարի հայ գրականությունը», Մ. Զայլախյանի «Կ. Ա. Տիմիրյազեվը որպես դարվինիկի մարտիկ», Սալոմե Արեշյանի «Ռուս գրողները Հայաստանի մասին», Գուրգեն Սեվակի «Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը»։

Մասնավոր տակ են և շուտով լույս կտեսնեն Մ. Աբեգյանի «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորը, Գ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Լ. Հովհաննիսյանի «Հայ բժշկության պատմության» երկրորդ հատորը, Ն. Տոկարսկու «Հին Հայաստանի ճարտարապետությունը», Գիոտրովսկու «Հայ ժողովրդի ծագման մասին» և այլն։